14598

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

«14» 12 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0220-21

Ձեռնարկողը՝ ***«Հրաչ և Ռուբեն» ՍՊԸ***
ք. Երևան, փ. Աճառյան, 37/1

Գործունեությունը՝ ***Ավան վարչական շրջան, Աճառյան փողոց 37/1 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան,Ավան վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0220-21

«14» 12 **2021թ.**

Երևան քաղաքի Ավան վարչական շրջան, Աճառյան փողոց 37/1 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Հրաչ և Ռուբեն » ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Ավան վարչական շրջան

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի ա. ենթակետի՝ բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցումը, որպես քաղաքաշինության բնագավառի գործունեություն դասակարգվում է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Ներածական մաս. Գործունեության նպատակն է Ավան վարչական շրջան, Աճառյան փողոց 37/1 հասցեում գտնվող հողամասում կառուցել 4 մասնաշենքերից բաղկացած բազմաֆունկցիոնալ համալիր: Համալիրի նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից 2021 թվականի փետրվարի 2-ին տրված N01/18-07/2-127649-100 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք): Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ օգտագործման նպատակը՝ շենքի կառուցապատման և սպասարկման համար: Հողամասը պատկանում է կառուցապատող՝ «Հրաչ և Ռուբեն» ՍՊ ընկերությանը /այսուհետ՝ Ընկերություն/ զբաղեցնում է ընդհանուր՝ 6480.0մք մակերես (հիմք՝ N2586634 վկայական, տրվ. 2010թվականի ապրիլի 4-ին):

Նկարագրական մաս. Գործունեության համար նախատեսված տարածքն իրենից ներկայացնում է նախկինում շենք շինություններով կառուցապատված: Հարևանությամբ գտնվում են Աճառյան փողոցը և հասարակական, արտադրական շինություններով ծանրաբեռնված հողամասեր, որոնցից կառուցապատվող հողամասն ընկած է 20-100մ հեռավորությունների վրա: Հողամասի 316.8 քմ ընդհանուր մակերեսով տարածքում առկա է թվով երեք ցածրահարկ շինություններ, որոնք ենթակա են քանդման: Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը և հատման ենթակա ծառերը բացակայում են:

Համաձայն նախագծի Համալիրը բաղկացած է 4 մասնաշենքերից, որոնցից Աճառյան փողոցին նայող մեկ մասնաշենքը նախատեսված է 16 վերգետնյա հարկով, իսկ ներս ընկած միանման երեք մասնաշենքերը՝ 18 վերգետնյա հարկերով: Համալիրի ամբողջ տարածքով նախատեսված է ստորգետնյա 3 հարկերով, 2 կողմերից տարբեր մուտքերով ավտոմեքենաների կայանատեղի: 16 հարկանի մասնաշենքի առաջին 2 հարկերը նախատեսված են որպես հասարակական նշանակության, իսկ 18 հարկանի մասնաշենքերի առաջին հարկերը բնակիչների համար նախատեսված է օգտագործել որպես սպասարկման տարածքներ: Նախատեսված է 2, 3 և 4 սենյականոց

բնակարաններ: բնակարանները հիմնականում ունեն անկյունային օդափոխություն: Միակողմանի փոքր բնակարանները նայում են դեպի արևելք և հարավ-արևմուտք, հյուսիսային կողմ նայող բակարաններ նախատեսված չեն: Մասնաշենքերն իրարից բաժանված են հակասեյսմիկ կարերով և մեկ մուտքանի են: Աստիճանավանդակը չծխացող է: Աստիճանավանդակին կից հարկերի պատշգամբներում նախատեսված են տարածքներ բնակարանների տեղային սառեցման համակարգերի և արտաքին սարքերի տեղադրման համար: Բոլոր մուտքերում նախատեսված են 2 վերելակներ /մարդատար և բեռնատար/: Հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար քաղաքաշինական նորմերին համապատասխան նախատեսված են համապատասխան միջոցառումներ:

Նախագծված բազմաֆունկցիոնալ համալիրի տանիքը հարթ է՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Արտաքին պատերը նախատեսված են երեսապատել ֆիբրոցեմենտեկախովի թեթև սալերով, իսկ առաջին հարկերը երեսապատվում են սրբատաշ բազալտե սալերով:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել Ա դասի՝ համալիր միջոցառումների իրականացմամբ, որոնց թվում են՝ օդափոխվող երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանները և վիտրաժները, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացումը: Ջերմության խնայողության համար կնտրվեն ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են 60% ջերմության խնայողություն: Բնակարանների խոհանոցներից, սան-հանգույցներից և լողասենյակներից օդափոխությունը նախատեսված է Φ=100, 125 և 160 մմ տրամագծերով բնական օդատարներով, որոնք բարձրանում են նախատեսված հորանների մեջ: 3.0մ բարձրությամբ ավտոկայանատեղիներում նախատեսված են ծխահեռացման և հրդեհամարման ավտոմատ համակարգեր և մեխանիկական դրդմամբ ներմուծմանև արտածման օդափոխության համակարգեր հորանների միջոցով՝ շենքերի տանիքներից դեպի դուրս: Տարածքի վերջնամասում էլեկտրամատակարարման համար նախատեսվում է կառուցել 6/0.4 կվ հզորությամբ ենթակայան:

Համալիրի կառուցապատման ընդհանուր տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- Հողամասի ընդհանուր մակերես - 6480.0 քմ,
- Կառուցապատման մակերես– 2598.0 քմ,
- Կանաչապատման մակերես– 2597քմ զրոյական նիշում /կամ հողամասի 40.08 %/
- Սալապատում, ճեմուղի – 1285 քմ,
- Ստորգետնյա ավտոհանգրվան – 3 հարկ, որից 1-ին հարկ՝ 3800քմ, 2-րդ հարկ՝ 4200քմ, 3-րդ հարկ՝ 4200քմ /ընդհանուր՝ 12200քմ/;
- Ստորգետնյա ավտոկայանատեղի՝ 270 ավտոմեքենայի համար,
- Վերգետնյա ժամանակավոր ավտոկայանատեղի՝ 30 մեքենայի համար
- բնակարանների թիվը՝ 444 հատ:

Բազմաֆունկցիոնալ համալիրի էլեկտրամատակարարումը կիրականացվի <<ՀԷՑ>> ՓԲԸ կողմից 28.09.2020թ. տրված տեխնիկական պայմանի համաձայն կառուցվելիք նոր 0.4 կվ ենթակայանով, որի սնուցումը կիրականացվի <<Կոտայք>> 110/6 ենթակայանից: Բնակելի համալիրի շահագործման ընթացքում ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի և նախագծի համաձայն: Շահագործման ընթացքում համալիրի ջերմամատակարարումը և տաք ջրամատակարարումը կիրականացվի էլեկտրական սարքավորումների միջոցով, գազաֆիկացում չի նախատեսվում:

Շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները և տեխնիկական լուծումները ներառված են հայտում և կիրականցվեն Շինարարության կազմակերպման նախագծի համաձայն: Կառուցապատման աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 39 ամիս, որից 4 ամիս կկազմի հողային աշխատանքներինը: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 48000 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Մնացորդային՝ 37500 խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր, իսկ գրունտի մնացած մասը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարության փուլի համար անհրաժեշտ ջրի քանակը /6090 խմ/շին. ժամ, որից շինհրապարակի ջրցանի, շինաշխատանքների կազմակերպման ջրածախսը կկազմի 1755 խմ/շին. ժամ/, շինհրապարակ է մատակարարվելու ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատողների խմելու և կենցաղային կարիքները կապահովվեն բերովի ջրով տարաներով, իսկ աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն շինհրապարակում տեղադրվող բիոզուգարաններով:

Շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը նախատեսված է իրականացնել մասնագիտացված կետերում: Բետոնի և շաղախի առաքումն իրականացվելու է մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ պատրաստի վիճակում, մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն փորման բեռնման, հողային զանգվածների տեղափոխման աշխատանքներով, շինարարության ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- շինարարության ընթացքում պարբերաբար ջրցանի իրականացում /օրական 2-3 անգամ/,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում՝ իրականացնելով կարգավորում,
- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- շինհրապարակում սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,
- շինարարական աշխատանքների ժամանակ շինությունների ծածկում՝ փոշու տարածումը կանխող ցանցով:

Շինարարության ընթացքում հոսքաջրերի և անձրևաջրերի հեռացման համար, շինհրապարակին կից նախատեսված է պարզարան, որտեղ հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական նստեցման, որից հետո պարզեցված ջուրը կրկին կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ առաջացած նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինհրապարակում նախատեսված է անվադողեի լվացման կետ, որտեղ կլվացվեն անվադողերը և դուրս կգան շինհրապարակից:

Շինարարության ընթացում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված միջոցառումները ներառում են շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում

սահմանված ժամերին, աղմուկ առաջացնող մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերման իրականացում:

Հայտում ներկայացվել են նաև տարբեր տեսակի թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ: Հողային ռեսուրսների և շրջակա տարածքների պահպանության նպատակով շինհրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ հիմքերի վրա (ավազե, մետաղական կամ բետոնե), բացառելու նպատակով հնարավոր արտահոսքերը շրջակա տարածքներ, իսկ նավթանյութերի արտահոսքը հնարավոր կլինի կանխել՝ ապահովելով շինարարական աշխատանքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

Շինարարության ընթացքում առաջացող՝ 4180 խմ ծավալով շինարարական աղբը /ներառյալ՝ տարածքում առկա արտադրական և օժանդակ շինությունների քանդման աշխատանքներից առաջացող շինարարական թափոններ/, ժամանակավոր կկուտակվի շինհրապարակում, այնուհետև ամբողջությամբ կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրեր:

Շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման համար, հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու և ռիսկերը նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսվել են միջոցառումների համալիր /որում ներառվել են նաև հակահրդեհային միջոցառումներ/:

Շինարարության փուլի համար նախատեսված բոլոր բնապահպանական միջոցառումները, ներառյալ՝ աշխատանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում /ԲԿՊ/: Կառուցապատողի կողմից ըստ ժամանակացույցի իրականացվելու է կանոնավոր մոնիտորինգ՝ բնապահպանական միջոցառումներ ծրագրում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը վերահսկելու նպատակով: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը հաշվարկվել է 2090000 ՀՀ դրամ, որի մեջ մտնում են՝ շինարարության փուլում շինհրապարակի ջրցանումը, ինչպես նաև մթնոլորտային արտանետումների, աղմուկի, թրթռումների, հողային ծածկույթի չափումները, որոնք նախատեսված են ամիսը մեկ հաճախականությամբ:

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել և հաստատվել է Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության հետ: Զրոյական նիշում կանաչապատման համար նախատեսված 2586 քմ կանաչապատվող տարածքի համար անհրաժեշտ կլինի 450 խմ բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատման համար նախատեսվում է տնկել հետևյալ ծառատեսակները, այդ թվում՝ 8 հատ թխկի, 24 հատ իլենի գնդաձև, 32 հատ ասպիրակ, 14 հատ ֆորզիցիա, 12 հատ խենոմելես, 10հատ ձիակասկ, 9 հատ կատալպա, 4 հատ եղևնի կովկասյան, 2 հատ Լաբորնում, 5 հատ հուդայածառ: Կանաչապատ գոտիներում կիրականացվի նաև բազմամյա խոտաբույսերի ցանք: Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից՝ նախագծային լուծումներին համապատասխան:

Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, իրականացնելով նաև

նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները՝ նպատակ ունենալով կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում անցկացվել են հանրային քննարկումներ: Փորձաքննության գործընթացում և Ավան վարչական շրջանում 2021 թվականի նոյեմբերի 9-ին իրականացված երկրորդ քննարկման ընթացքում բարձրացվեց հարց՝ կառուցապատման կանաչապատման մակերեսների ցուցանիշների հետ կապված, ինչը հաշվի է առնվել փորձաքննության ընթացքում, հայտը լրամշակվել է:

Փորձաքննական գործընթացում Հայտի վերաբերյալ ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների, պաշտպանության, նախարարություններից, կադաստրի կոմիտեից, քաղաքաշինության կոմիտեից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հիմնականում հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ ընդգրկելով հիմնականում նախատեսվող գործունեության տեղամասը և շինարարության ժամանակահատվածը: Դրանք շինարարության ընթացքում կարող են բացառվել կամ մեղմացվել Հայտի բնապահպանական միջոցառումներ ծրագրում նախանշված մեղմացնող միջոցառումների և Մոնիթորիգի պլանում ամփոփված միջոցառումների և գործողություններ արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ՀՀՇՆ I-3. 01. 01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերը հաստատելու մասի քաղաքաշինության նախարարի 2008 թ. հունվարի 14-ի թիվ 11-Ն հրամանով հաստատված նորմերով և պահանջներով:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է՝

- պարսպապատել շինարարական հրապարակը,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- լվանալ շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Տարածքի կանաչապատման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման /դենդրո/ նախագծի և հայտում ներկայացված կանաչապատման լուծումներին համապատասխան /զրոյական նիշում ստեղծել 2586 քմ մակերեսով կանաչապատ գոտի/, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

5. Վերջանական նախագծման և կառուցապատման աշխատանքներում անհրաժեշտ է հաշվի առնել շենքերի և շինությունների էներգախնայողության և էներգաարդյունավետության լուծումները՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ-ի №426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:

6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Երևան քաղաքի Ավան վարչական շրջան, Աճառյան փողոց 37/1 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան